

Մարզպետ Դավիթ Գեւորգյանը մասնակցեց աշխատանքի տոնավաճառին

19.10.2018

Հոկտեմբերի 19-ին Արագածոտնի մարզպետ Դավիթ Գեւորգյանը մասնակցեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառին: Միջոցառումը կայացավ Աշտարակի քաղաքային մշակույթի տան սրահում, որին մասնակցում էին ամենատարբեր ոլորտի ավելի քան 30 կազմակերպություններ, ձեռնարկություններ եւ ընկերություններ: Նրանք ընդհանուր առմամբ ներկայացրին առկա 64 եւ սպասվելիք 24 աշխատատեղեր:

Ողջունելով մասնակիցներին՝ Դավիթ Գեւորգյանը նշեց, որ նախաձեռնության նպատակն է իրականացնել գործատուների եւ աշխատանք փնտրողների հանդիպումը, հանրությանը ներկայացնել մարզի աշխատաշուկայի պահանջարկն ու թափուր աշխատատեղերի առաջարկը: Նա կարեւորեց, որ աշխատանքի տոնավաճառը դրական ազդեցություն կունենա մարզում առկա հիմնական խնդիրներից մեկի՝ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար:

-Աշխատատեղերի խնդիրը առկա է ողջ հանրապետությունում: Արագածոտնում այն առավել զգալի է,- ասաց մարզպետը եւ վստահեցրեց, որ անելու է հնարավոր ամեն ինչ աշխատատեղերի հարցով մարզում հեղափոխական փոփոխությունների հասնելու նպատակով, ինչի համար ակնկալում է հանրության աջակցությունը:

Չբաղվածության պետական գործակալության պետի պաշտոնակատար Արտակ Սիմոնյանը շնորհավորեց Նորանշանակ մարզպետին՝ պաշտոնավարման կապակցությամբ եւ գործատուներին հորդորեց առավել թափանցիկ աշխատել, պարբերաբար հրապարակել իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերը եւ ապահովել արդյունավետ համալրում:

Շրջելով տոնավաճառի տաղավարներով՝ Դավիթ Գեւորգյանը ծանոթացավ գործատուների կողմից առաջարկվող աշխատատեղերին, աշխատանքային պայմաններին, գրուցեց գործատուների եւ աշխատանք փնտրող քաղաքացիների հետ, պատրաստակամություն հայտնեց հնարավորինս աջակցել նրանց: